

Համագործակցության վերաբերյալ միջնորդության ներկայացման կարգը և դրա քննարկումը

Մանուկյան Նոննա Ռ.

*Քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի ասպիրանտ
Հայ-ռուսական համալսարան (Երևան, ՀՀ)
nonna.manukyan94@gmail.com*

ՀՏԳ՝ 347.9; EDN: NVTVVC

Հանգուցաբառեր՝ միջնորդություն, համագործակցություն, համաձայնագիր, քննիչ, դատախազ, նախաքննություն, կնքել

Порядок заявления ходатайства о заключении досудебного соглашения о сотрудничестве и его рассмотрения

Манукян Нонна Р.

*Аспирант кафедры Уголовного права и уголовно-процессуального права
Российско-Армянский университет (Ереван, РА)
nonna.manukyan94@gmail.com*

Аннотация. В статье рассматриваются основания и условия заключения соглашения о сотрудничестве, действия публичных участников процесса при подаче такого ходатайства обвиняемым или защитником, основания и особенности заключения соглашения, отказа от него, а также основания и условия расторжения заключенного договора. При этом затрагиваются вопросы, связанные с обжалованием решений, принятых в условиях обсуждаемой процедуры.

Проведен анализ основных положений заключения договора о сотрудничестве, некоторые проблемы, возникающие при его заключении, в контексте чего представлены соответствующие предложения по применению правовых норм. В рамках обсуждаемых вопросов выявлены законодательные пробелы, требующие правового регулирования.

Ключевые слова. заявление, сотрудничество, соглашение, следователь, прокурор, расследование, заключение

The Procedure for Submitting a Petition for Cooperation and its Consideration

Manukyan Nonna R.

*Postgraduate student of the Department of Criminal Law and Criminal Procedure
Russian-Armenian University (Yerevan, RA)
nonna.manukyan94@gmail.com*

Abstract. The article discusses the grounds and conditions for concluding a cooperation agreement, the actions of public participants in the proceedings when the accused or the defense attorney submits such a petition, the grounds and characteristics of concluding the agreement, rejecting it, as well as the grounds and conditions for terminating the concluded agreement. At the same time, the questions related to the appeal of the decisions made under the conditions of the discussed procedure are referred to.

An analysis is made of the main provisions of the conclusion of the cooperation agreement, some problems arising during its conclusion, in the context of which relevant proposals are presented regarding the application of legal norms. Within the framework of the discussed issues, legislative gaps have been revealed that require legal regulation.

Keywords: application, cooperation, agreement, investigator, prosecutor, investigation, conclusion

Քրեադատավարական համակարգում համագործակցության համաձայնագրի ինստիտուտի առաջացումը պայմանավորված է իրավական համակարգում փոխզիջումային ընթացակարգերի ներդրման անհրաժեշտությամբ: Սույն ինստիտուտը նպատակ է հետապնդում նպաստել առավել բարդ խմբակային հանցագործությունների քննության և բացահայտման որակի բարելավմանը:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումների հաշվառմամբ համագործակցության համաձայնագրի կնքման քրեադատավարական ընթացա-

կարգը պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի.

1. Համագործակցության համաձայնագրի կնքման վերաբերյալ մեղադրյալի կողմից միջնորդության ներկայացում,

2. Քննիչի կողմից նշված միջնորդության ուսումնասիրության արդյունքում դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ գրավոր կարծիք կազմում,

3. Դատախազի կողմից միջնորդության և կից տրամադրված կարծիքի ուսումնասիրություն և համապատասխան որոշման կայացում,

4. Համագործակցության համաձայնագրի բովանդակության կազմում և վարույթի մասնակիցների կողմից դրա ստորագրում:

Մեղադրյալի կողմից ներկայացված միջնորդության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու նպատակով դատախազին անհրաժեշտ է ներկայացնել երկու ընթացակարգային փաստաթուղթ՝ մեղադրյալի միջնորդությունը և քննիչի կողմից կազմված գրավոր կարծիքը: Վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում դատախազը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝ մերժել կամ բավարարել համագործակցության համաձայնագիր կնքելու վերաբերյալ միջնորդությունը: Նման որոշում կայացնելիս դատախազի կողմից առաջնահերթ գնահատվում է այն հանգամաքը, որ նման միջնորդությունը պետք է պարունակի հստակ ցուցում այն գործողությունների մասին, որոնք մեղադրյալը (կասկածյալը) պարտավորվում է կատարել՝ քրեական գործի քննությանը նպաստելու նպատակով: Միջնորդությամբ նշված պարտավորությունները գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել դրանց փաստացի կատարման հնարավորությանը և անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ տեղեկատվություն միջնորդությունը նախաձեռնող կողմից:

Միջնորդությունը պետք է սահմանի մեղադրյալի պարտավորությունները, համաձայն որոնց վերջինս պարտավորվում է մասնակցել հարուցված քրեական գործով և այլ քրեական գործերով իրականացվող քննչական գործողություններին, մասնակցել օպերատիվ-հետախուզական միջոցառումներին, որոնք նպաստելու են նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների բացահայտմանը, հետախուզվողի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի գտնվելու վայրի մասին, ինչպես նաև նախաքննության մարմիններին հանցավոր կազմակերպության կառուցվածքի և նրա ղեկավարների մասին հետաքրքրող այլ տեղեկատվության տրամադրմանը:

Դատախազի կողմից միջնորդության մերժման ամենատարածված հիմնավորումները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1) օպերատիվ գործունեություն իրականացնող ծառայողները արդեն իսկ տիրապետում են հանցագործություն կատարած անձի վերաբերյալ տեղեկության,

2) միջնորդություն ներկայացրած անձը չի տիրապետում քննչական կամ օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության,

3) ներկայացված փաստաթղթերը տեղեկատվություն չեն պարունակում այն գործողությունների վերաբերյալ, որոնք մեղադրյալը պար-

տավորվում է իրականացնել քննությանն օժանդակելու նպատակով,

4) նախաքննությունը գտնվում է ավարտական փուլում, բոլոր քննչական գործողություններն իրականացվել են, նախաքննության մարմիններին օժանդակություն ցուցաբերել այլևս անհրաժեշտ չէ, հանցագործությունները և դրանք կատարած անձինք, այդ թվում՝ հանցակիցները, բացահայտվել են քննչական և օպերատիվ գործողությունների միջոցով:

Համագործակցության համաձայնագրի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ քննարկվող իրավահարաբերություններում տուժողի մասնակցության վերաբերյալ առկա իրարամերժ կարծիքներին:

Այսպես, գիտական հանրության կողմից անընդունելի է համարվում մինչդատական համաձայնագրի կնքման գործընթացում տուժողի մասնակցության, ավելի ճիշտ՝ դրա իսպառ անտեսման օրենսդրի դիրքորոշումը: Հեղինակներից շատերի, այդ թվում՝ Ա. Վ. Սմիրնովի պնդմամբ, համագործակցության համաձայնագրի կնքման պարտադիր պայմաններից մեկը պետք է լինի տուժողի համաձայնության ձեռքբերումը՝ հակառակ պարագայում ոտնահարվում են քրեական վարույթի այդ մասնակցի իրավունքները [1, էջեր 6-7]:

Հեղինակների գերակշիռ մասը հակառակ տեսակետի կողմնակիցներն են, մասնավորապես՝ Ա. Ս. Ալեքսանդրովը և Ի. Ա. Ալեքսանդրովը, մատնանշում են ներդրված ինստիտուտի հանրային իրավական նպատակն ու բնույթը, ինչպես նաև առավել վտանգավոր հանցագործությունների դեմ պայքարը՝ տուժողի դիրքորոշումից կախվածության մեջ դնելու անթույլատրելիության հարցը [2, էջեր 10-11]:

Նշված խնդրին անդրադարձ է կատարվել Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի կողմից, որում արտահայտված դիրքորոշման համաձայն՝ մեղադրյալի հետ մինչդատական համագործակցության համաձայնագիր կնքված լինելու պարագայում՝ տուժողի (նրա օրինական ներկայացուցիչ, ներկայացուցիչ), քաղաքացիական հայցվորի և նրա ներկայացուցչի առարկությունն ընդդեմ դատական նիստի անցկացման հատուկ ընթացակարգի կիրառման չի կարող հիմք հանդիսանալ գործը ընդհանուր կարգով քննելու համար [3]:

Այսպիսով, պետության և պաշտպանական կողմի միջև համագործակցության համաձայնագրի կնքման ընթացակարգին տուժողի կողմից անմիջական մասնակցություն չունենալու օրենսդրի դիրքորոշումը, հիմնարար է՝ ելնելով այս ինստիտուտի հանրային իրավական բնույթից և նպատակից: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի

դիրքորոշումը, համաձայն որի՝ տուժողի իրավունքների վերականգնումը ապահովելու պետության պարտավորությունը չի ենթադրում վերջինիս իրավունք վերապահել կանխորոշել կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև տվյալ անձի նկատմամբ կիրառվող քրեական պատասխանատվության սահմանները: Նման իրավունք, ելնելով քրեա-իրավական հարաբերությունների հրապարակային բնույթից, կարող է պատկանել միայն պետությանը՝ օրենսդիր և իրավակիրառ մարմինների միջոցով իրացնելու եղանակով [4]:

Նշվածին զուգահեռ, համագործակցության համաձայնագրի շրջանակներում քննարկվում և ամրագրում է ստանում տուժողի սեփականության իրավունքի պաշտպանության հարցը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 468-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «*Եթե չհատուցված վնասը տուժողին պատճառվել է միայն մեղադրյալին մեղսագրվող արարքով, ապա համաձայնագրում նշվում է նաև այդ վնասը լրիվ հատուցելու մեղադրյալի պարտականությունը*» [5]:

Քննարկելով համագործակցության համաձայնագիր կնքելու վերաբերյալ ներկայացված միջնորդության բովանդակությունը, հարկ է ուշադրությունն հրավիրել այն կարևոր հանգամանքին, որ մեղադրյալը պարտավոր չէ բուն միջնորդության մեջ, ինչպես նաև դատախազի հետ բանակցությունների ընթացքում տրամադրել կոնկրետ տվյալներ, որոնք կազմում են համագործակցության էությունը և համաձայնագրի առարկան: Այս համատեքստում Մ. Ս. Ստրոգովիչը նշել է, որ մինչև համագործակցության համաձայնագրի կնքումը կասկածյալը (մեղադրյալը) պարտավոր չէ իր ցուցմունքում հայտնել հանցագործության բոլոր մանրամասները և մասնակցել հանցագործության հանցակիցներին բացահայտելու նպատակով իրականացվող քննչական գործողություններին: Բացի այդ, եթե մեղադրյալը մինչև դրա կնքումը կատարում է մինչդատական համագործակցության համաձայնագրի հետագա իրականացմանն ուղղված բոլոր հնարավոր գործողությունները, ապա համաձայնագրի պարտավորությունների դատավարական ամրագրման փաստը մեղադրող կողմի համար կորցնում է իր նշանակությունը [6, էջ 260]:

Անհերքելի է այն, որ քննիչը, դատախազը կարող են միջոցներ ձեռնարկել՝ ստուգելու միջնորդություն ներկայացրած անձի տեղեկացվածությունը և նրա իրական կարողությունները՝ կոնկրետ քննչական գործողություններին, օպերատիվ հետախուզական միջոցառումներին, ընթացակարգային գործողություններին և համագործակցության համաձայնագրի ինս-

տիտուտի նպատակներին հասնելուն աջակցելու հարցում:

Համագործակցության համաձայնագրի բովանդակությանը անդրադարձ կատարելիս անհրաժեշտ է նշել, որ այն պետք է լինի հնարավորինս կոնկրետ և պարտադիր երկու կողմերի համար, հակառակ դեպքում խնդիրներ են առաջանում համագործակցության արդյունավետությունը գնահատելիս: Միաժամանակ, անհրաժեշտ է մեղադրյալից հստակեցնել թե կոնկրետ ինչ գործողություններ է վերջինս կատարելու համագործակցության համաձայնագրի իրականացման նպատակով: Հանցագործությունների բացահայտման հարցում մեղադրյալի կողմից քննչական մարմիններին ցուցաբերվող աջակցության ձևերն ու եղանակները կարող են լինել շատ տարբեր: Այդ թվում, չի բացառվում նոր ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման նպատակով մեղադրյալի՝ օպերատիվ միջոցառումներին մասնակցության հնարավորությունը [7, էջեր 97-98]:

Դատախազի կողմից համագործակցության համաձայնագրի կնքման միջնորդության բավարարումը դեռևս չի ենթադրում համաձայնագրի պարտադիր կնքում: Այն նշանակում է, որ դատախազը պետք է հրավիրի մեղադրյալին, նրա պաշտպանին և վերջիններիս մասնակցությամբ բանակցություններ վարի, որոնց արդյունքում միայն ստորագրվելու է համաձայնագիրը:

Քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանց՝ հանցագործության մասնակիցների կողմից քննչական մարմիններին ցուցաբերվող ակտիվ աջակցության, հանցագործության կազմակերպիչների բացահայտումը հաճախ դառնում է խնդրահարույց: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ գլխի դրույթների արդյունավետ իրացումն անհնար է առանց այնպիսի պատշաճ դատավարական երաշխիքների նախատեսման, որոնք մեղադրյալին պարզաբանելու են կատարված հանցագործության համար նախատեսված պատիժը մեղմելու օրենքով տրված հնարավորության մասին:

Առկա օրենսդրական կարգավորումների համաձայն՝ համագործակցության համաձայնագրի կնքման նախաձեռնությունը պետք է լինի մեղադրյալի կողմից: Այս դրույթի համատեքստում լայն քննարկման առարկա է դարձել մեղադրյալին՝ համագործակցության համաձայնագիր կնքելու վերաբերյալ համապատասխան միջնորդություն ներկայացնելու իրավունքի պարզաբանման անհրաժեշտության հարցը: Հաշվի առնելով ոչ բավարար իրավական գրագիտության աստիճանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ քննարկվող ինստիտուտի ներդրումը համեմատաբար նոր է, ապա, մեղադրյալի կարգավիճակում հայտնված անձանց

ճնշող մեծամասնությունը տեղեկացված չի լինելու նման հնարավորության մասին:

Քննարկվող ինստիտուտի ներդրումից հետո բարձրացված խնդրին անմիջապես անդրադարձ են կատարել ոլորտի մի շարք տեսաբաններ, նշելով, որ առկա է համաձայնագրի կնքման վերաբերյալ միջնորդության ներկայացման իրավունքի պարզաբանման ընթացակարգի օրենսդրական կարգավորման բաց: Օրինակ՝ Ն. Ն. Ապոստոլովան, Է. Ա. Արտամոնովան, Վ. Մ. Բիկովը, Կ. Բ. Գրանկինը, Է. Վ. Միլտովը, Յու. Գ. Օվչիննիկովը ընդգծել են Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում կասկածյալների (մեղադրյալների) նոր իրավունքի ամրագրման անհրաժեշտությունը և առաջարկել դրա պարզաբանման եղանակները:

Հեղինակների մեծ մասը, այդ թվում՝ Կ. Բ. Գրանկինը, Է. Վ. Միլտովան, Ա. Վ. Գրիչանիչենկոն, Ռ. Ռ. Սարկիսյանցը, պաշտպանում են այն տեսակետը, որ հենց քննիչն է պարտավոր կասկածյալին (մեղադրյալին) բացատրել մինչդատական համագործակցության համաձայնագիր կնքելու իրավունքը: Ըստ Վ. Վ. Գորյունովայի, Ու. Տ. Ուլյանովայի, Ռուսաստանի Դաշնության Քրեական դատավարության օրենսգրքը այդ իրավունքի պարզաբանման պարտավորությունը վերապահել է մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելուն կոչված անձին՝ պաշտպանին: Մինչդեռ, քրեադատավարական օրենսդրությունը նման դրույթ չի բովանդակում: Նման իրավիճակում մեղադրյալը կարող է անտեղյակ մնալ հանցագործության մասնակիցների գործողությունների մասին ճշմարտացի տեղեկատվության դիմաց՝ ավելի մեղմ պատիժ ստանալու իրեն ընձեռված հնարավորության մասին [8]:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գիտնականների շրջանում չկա մեկ միասնական տեսակետ նաև այն հարցի վերաբերյալ, թե, որ փուլում է անհրաժեշտ մեղադրյալին պարզաբանել մինչդատական համաձայնագրի կնքման միջնորդություն ներկայացնելու իրավունքը: Տարաբնույթ կարծիքների գոյությունը պայմանավորված է քրեական հետապնդման հարուցման պահի կապակցությամբ տարբեր մոտեցումների առկայությամբ:

Օրինակ, հեղինակներից մեկի՝ Դ. Տ. Արաբուլիի կարծիքով, մինչդատական պայմանագիր կնքելու իրավունքը կասկածյալին պետք է բացատրել քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը վերջինիս հանձնելու պահին, ինչպես նաև նրա նկատմամբ խափանման միջոց ընտրելիս և ձերբակալման պահին [9, էջ 16]:

Կասկածյալների և մեղադրյալների իրավունքների լիարժեք բացատրության անհրաժեշտությունը հաստատվում է միջազգային

իրավակիրառ պրակտիկայի կողմից: Միացյալ Նահանգներում այս գործընթացին սկսեցին առանձնահատուկ ուշադրություն դարձնել, երբ «Միրանդան ընդդեմ Արիզոնայի» գործով Դաշնային Գերագույն դատարանի կողմից կայացված որոշմամբ, դատարանը եզրահանգել էր, որ կասկածյալների և մեղադրյալների մասնակցությամբ վարույթ իրականացնելն անարդյունավետ է՝ առանց վերջիններիս ընձեռնված իրավունքների մասին պատշաճ բացատրության [10, էջ 423]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում քննարկվող խնդրին տրվել է հետևյալ լուծումը. Օրենսգրքի 43-րդ հոդվածը սահմանում է մեղադրյալի իրավունքները, որի 1-ին մասի 24-րդ կետը ամրագրում է մեղադրյալի՝ համագործակցության վարույթ կիրառելու վերաբերյալ հսկող դատախազին միջնորդելու իրավունքը: Օրենսդրի կողմից սույն դրույթով կարգավորվել է նաև իրավունքի մասին ծանուցման ժամանակահատվածը, այն է՝ մեղադրյալին ձերբակալելուց կամ մեղադրանք ներկայացնելուց հետո՝ անհապաղ:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը իրավական տեսանկյունից սահմանում է քննարկվող խնդրի կարգավորումը, սակայն կարծում ենք, որ վարույթն իրականացնող մարմնի նման պարտավորությունը չպետք է կրի ձևական բնույթ, սահմանափակվի միայն ի թիվս այլ իրավունքների դրա թվարկմամբ, այլ պետք է միտված լինի այդ ինստիտուտի օրենքով նախատեսված երաշխիքների էության և բովանդակության առավել մանրամասն պարզաբանմանը: Քննիչի կողմից մինչդատական համաձայնագիր կնքելու իրավունքի ներկայացման փաստը պետք է արտացոլվի նաև հարցաքննության համապատասխան արձանագրությունում: Բացի այդ, նպատակահարմար է այս իրավունքը գետեղել՝ գործնականում օգտագործվող այն արձանագրություններում, որոնցում պարզաբանվում է պաշտպանության իրավունքը:

Քրեական դատավարության օրենսդրությունը նախատեսում է ընթացակարգային բնույթի մի շարք պահանջներ, որոնց պահպանումը համագործակցության համաձայնագրի օրինականության նախապայման է:

Թվարկենք դրանցից մի քանիսը.

1. Համագործակցության համաձայնագրի ինստիտուտի կիրառման թույլատրելի ժամկետները.

Մեղադրյալն իրավունք ունի համագործակցության համաձայնագիր կնքելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել՝ քրեական հետապնդման հարուցման, փաստացի ձերբակալման կամ իրավապահների կողմից վերջինիս իրա-

վունքների սահմանափակման հետ կապված այլ դատավարական գործողության կատարման պահից ի վեր՝ մինչև նախաքննության ավարտի մասին հայտարարելը [5]: Նշված ժամկետի բացթողումը հիմք է հանդիսանում մինչդատական համաձայնագրի կնքման միջնորդությունը մերժելու համար:

Գործնականում մինչդատական համաձայնագիրը առավել հաճախ կնքվում է մեղադրանքի առաջադրումից անմիջապես հետո: Որպես կանոն, այս փուլում իրավապահ մարմիններն ունեն բավարար փաստարկներ, որոնք նպաստում են մեղադրյալի մոտ քննության հետ համագործակցելու նպատակահարմարության մասին կարծիքի ձևավորմանը: Իր հերթին, փաստաբանն ու մեղադրյալը հնարավորություն ունեն կառուցելու մշակված պաշտպանական գիծ՝ հետագայում քրեական հետապնդման շրջանակներում առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար [8]:

2. Համագործակցության համաձայնագիրը պետք է կնքվի ինքնակամ և միայն պաշտպանի մասնակցությամբ:

Համագործակցության համաձայնագրի կնքման կարևորագույն պայմանը մեղադրյալի աջակցությունն է քննությանը՝ հանցագործության հանցակիցների, այլ անձի կողմից ենթադրաբար կատարված և մեղադրյալին վերագրվող հանցանքի ծանրությանը համարժեք կամ ավելի ծանր հանցանքի բացահայտման հարցում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ գլուխը չի կարող կիրառվել, եթե մեղադրյալի կողմից իրավապահ մարմիններին տրամադրվող օգնությունը սահմանափակվելու է միայն հանցավոր գործունեությանը սեփական մասնակցության մասին տեղեկությունների հաղորդմամբ:

3. Համագործակցության համաձայնագրի կնքումը հնարավոր է միայն նախաքննության կարգով քննվող քրեական գործի ընթացքում:

4. Համագործակցության համաձայնագրի կնքումը հնարավոր է միայն այն պարագայում, եթե մեղադրյալի կողմից իրավապահ մարմիններին տրամադրվող աջակցությունը էական կարևորություն է ներկայացնում քննության համար: Քննարկվող ինստիտուտի կիրառումը իրական անհրաժեշտության բացակայության պարագայում հակասում է ՀՀ քրեական դատավարությունում դրա ներդրման նպատակներին:

5. Մեղադրյալի համաձայնությունը առաջադրված մեղադրանքի հետ:

Անդրադառնալով այս հարցին, հարկ է նշել, որ մեղադրյալի կողմից մեղադրանքը չվիճարկել չի կարող ենթադրել համաձայնություն մեղադրյալի գործողությունների որակման վերաբերյալ դատախազի դիրքորոշման հետ: Իր հերթին, առաջադրված մեղադրանքի հետ

համաձայնությունը նշանակում է դատախազի և մեղադրյալի կարծիքների միջև տարաձայնությունների բացակայություն՝ մեղսագրվող արարքի ընդհանուր նկարագրի և որակման կապակցությամբ: Այսպիսով, համագործակցության համաձայնագրի կնքումը կիրառելի է միայն այն դեպքում, երբ մեղադրյալը փաստացի հայտարարում է մեղադրական եզրակացությունում շարադրված հանցավոր արարքի հատկանիշների, հանցանքի կոնկրետ հանգամանքների, ինչպես նաև իրավական գնահատականի ճշմարտացիության մասին:

Մեղադրյալի կողմից մեղքի ընդունման և առաջադրված մեղադրանքի հետ համաձայնության իրավական հետևանքների մասին հարցերը գիտնականների ուսումնասիրության առարկան են եղել դեռևս վաղ ժամանակներից: Այսպես, անդրադառնալով մեղադրյալի կողմից մեղքի ընդունման դրդապատճառներին՝ Ս. Ի. Վիկտորսկին արդարացիորեն նշել է, որ քրեական պատասխանատվության ենթարկված անձը ընդունակ է խոստովանական ցուցմունք տալ՝ առաջադրված մեղադրանքից հետագա հրաժարվելու անհիմաստությունը գիտակցելու տպավորությամբ: Ս. Ի. Վիկտորսկու կողմից ավելի քան 100 տարի առաջ արված եզրակացությունները դեռևս տեղին են և հաստատում են մեղադրյալի խոստովանական ցուցմունքի ճշմարտացիությունը հավաստող այլ միմյանց հետ կապակցված ապացույցների ձեռքբերման անհրաժեշտությունը [11, էջ 263]:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն իրավական դրույթը, որ դատաքննությունն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 471-474-րդ հոդվածների կանոններով, գալիս ենք այն եզրահանգման, որ մեղադրանքը չվիճարկելը մեղադրական դատավճիռ կայացնելու պարտադիր պայմաններից է: Այնուամենայնիվ, այս պայմաններում մեղքի ընդունումը պետք է դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված նորմի տեսանկյունից, որը սահմանում է, որ հանցագործության համար անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա. այն պետք է հաստատվի փոխկապակցված վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջությամբ:

Հարկ է նշել, որ կողմերի ապացուցողական գործունեությունն է, որ որոշում է անձի մեղավորությունը (անմեղությունը), այլ ոչ թե համապատասխան խոստովանության փաստը: Այս առիթով հետաքրքրական է Ա. Վ. Սմիրնովի և Ի. Չվեչարովսկու կարծիքը, ըստ որի՝ մեղադրյալի (կասկածյալի) հետ համագործակցության համաձայնագիր կնքելիս և այն իրագործելիս վերջինիս կողմից պահանջվում է միայն համա-

գործակցելու ցանկություն, իսկ սույն ինստիտուտի ներդրման նպատակն ի սկզբանե ոչ թե մեղքի ընդունումն է, այլ դրական հետքերական վարքագծի խթանումը [12, էջ 15]:

Եզրափակելով հարկ է նկատել, որ համագործակցության համաձայնագրի սուբյեկտի մեղավորությունը մեղսագրվող հանցագործությանը պետք է հիմնավորվի փոխկապակցված ապացույցների ամբողջականությամբ՝ բացառելով քրեադատավարական քաշքշուքներից խուսափելու կամ իրական հանցագործին թաքցնելու նպատակով մեղադրյալի կողմից չկատարված արարքը ինքն իրեն վերագրելու հնարավորությունը: Միաժամանակ, կարևոր պայման է քննիչի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում՝ մեղադրյալին համագործակցության համաձայնագիր կնքելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքի մանրամասն կերպով պարզաբանումը՝ թույլ չտալով վարույթն իրականացնող մարմնին համաձայնագրի շրջանակներից դուրս մեղադրյալից կորզել քննությանը անհրաժեշտ տեղեկատվությունը:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ գլուխը պետք է կիրառվի միայն լայն հասարակական հնչեղություն ունեցող և (կամ) հանրային բարձր վտանգավորության հանցագործությունների բացահայտման և քննության համար, պայմանով, որ ապացուցվող հանգամանքների հաստատումն այլ միջոցներով այլընտրանք չունի:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Смирнов А. В.** Особый порядок принятия судебного решения при заключении досудебного соглашения о сотрудничестве // Уголовный процесс. 2009. №10.
2. **Александров А. С., Александрова И. А.** Соглашение о досудебном сотрудничестве со следствием: правовая сущность и вопросы толкования норм, входящих в главу 40.1 УПК РФ // Уголовный процесс. 2009. №8.
3. Московский городской суд. URL: <https://goo.su/wMPOyWT> (ссылка укорочена)

4. Постановление Конституционного Суда РФ от 24 апр. 2003 г. № 7-П «По делу о проверке конституционности положения пункта 8 Постановления Государственной Думы от 26 мая 2000 года «Об объявлении амнистии в связи с 55-летием Победы в Великой Отечественной войне 1941–1945 годов» в связи с жалобой гражданки Л.М. Запорожец» // СЗ РФ. 2003. № 18. Ст. 1748.
5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, 30.06.2021 թ.
6. **Строгович М. С.** Курс советского уголовного процесса. – М: Академия наук СССР, 1958.
7. **Павличенко Н. В.** Досудебное соглашение как основа смягчения ответственности за совершение преступлений лицами, оказывающими содействие органам, осуществляющим оперативно-розыскную деятельность // Современное право. 2010. №2.
8. **Тисен О. Н.** Теоретические и практические проблемы Института досудебного соглашения о сотрудничестве в Российском уголовном судопроизводстве, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Оренбург 2017, с. 68.
9. **Арабули Д. Т.** Исследование отдельных полномочий участников уголовного судопроизводства со стороны обвинения при заключении досудебного соглашения о сотрудничестве // Мировой судья. – 2009. – № 9.
10. **Федорова О. В.** К вопросу разъяснения прав, обязанностей и ответственности участникам уголовного судопроизводства // Обеспечение законности в российском уголовном судопроизводстве: материалы Международной научно-практической конференции (Саранск, 7 – 8 декабря 2006 г.) / МГУ им. Н.П. Огарева. – Саранск: Мордовское книжное издательство, 2006.
11. **Викторский С. И.** Русский уголовный процесс. – М., 1912.
12. **Звечаровский И. Э.** Юридическая природа института досудебного соглашения о сотрудничестве // Законность. – 2009. – № 9.

Տճանաչման/հանձնվել է՝ 06.03.2022
 Բեւաւնաւնա/Գրախոսուել է՝ 28.03.2023
 Քրաւնա/Ընդունուել է՝ 04.04.2023